

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Մովսես Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Ճապոնիա, հունիսի 1-ից 8-ը, 2024 թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ճապոնիա

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն 2024թ. հունիսի 1-ից 8-ը ԱՄՆ Պետդեպարտամենտի FIRST ծրագրի շրջանակներում կայանալիք «Փոքր մոդուլային ռեակտորների տեխնոլոգիայի օգտագործման հիմնական ենթակառուցվածքի շահագրգիռ կողմերի ներգրավմամբ» ճանաչողական այցին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Փոքր մոդուլային ռեակտորների (ՓՄՌ) տեխնոլոգիայի ընդունումը ներկայացնում է զգալի առաջընթաց ատոմային էներգիայի բնագավառում, առաջարկելով ավելի ապահով, ճկուն և արդյունավետ լուծում համաշխարհային էներգետիկ կարիքների համար: «Փոքր մոդուլային ռեակտորների տեխնոլոգիայի օգտագործման հիմնական ենթակառուցվածքի շահագրգիռ կողմերի ներգրավմամբ» ծրագիրը նպատակ ունի նպաստել ՓՄՌ-ների զարգացմանն ու կիրառմանը միջազգային համագործակցության միջոցով: Այս ճանաչողական այցը, որն իրականացվում է FIRST նախագծի շրջանակներում, ուղղված է հասկանալու և ինտեգրելու լավագույն փորձերը փոքր մոդուլային ռեակտորների տեխնոլոգիայի և ենթակառուցվածքի ոլորտում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպումը պաշտոնապես բացելուց հետո համակարգողները Սատորու Յամաշիտան (Միջազգային գործերի գծով տնօրեն) և Աննա Վազները (Ծրագրի ավագ խորհրդական) ներկայացրեցին հանդիպման նպատակներն ու խնդիրները: Այցին մասնակցում էին տարբեր երկրների ատոմային արդյունաբերության ներկայացուցիչներ, ատոմային տեխնոլոգիաների մասնագետներ և գիտնականներ, շրջակա միջավայրի և համայնքային պաշտպանության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ճանաչողական այցի հիմնական նպատակներն էին հասկանալ Ճապոնիայի փոքր մոդուլային ռեակտորների տեխնոլոգիաները և ենթակառուցվածքը, հետազոտել Ճապոնիայի փորձը ՓՄՌ տեխնոլոգիաների ոլորտում, ներառյալ նախագծումը, անվտանգության համակարգերի ակտիվ և պասիվ էլեմենտների առկայությունը, գործառնական կանոնակարգերը՝ համոզվելով, որ ՓՄՌ-ների կիրառումը համապատասխանում է անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության ամենաբարձր չափանիշներին:

Առաջին և երկրորդ օրերի ընթացքում օրակարգի համաձայն ներկայացվում էին զեկույցներ, տեղի էին ունենում խմբային հանդիպումներ, այնուհետև՝ քննարկումներ: Այսպես Ջանկոն (Ընդհանուր հարցերի և հասարակայնության հետ կապերի բաժին) հանդես եկավ իր զեկույցով, որի թեման էր «Ճապոնիայի ատոմային էներգիայի գործակալության կողմից իրականացվող ռադիացիոն և միջուկային կրթությունը հաջորդ սերունդների համար»: Ճապոնիայի ատոմային էներգիայի գործակալությունը (ՃԱԷԳ) կարևոր դեր ունի Ճապոնիայում միջուկային տեխնոլոգիաների զարգացման մեջ: Հասկանալով կրթության կարևորությունը՝ ՃԱԷԳ-ն մշակել է համապարփակ ծրագրեր, որոնք կենտրոնացած են ռադիացիոն և միջուկային կրթության վրա: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն տալ սերունդներին ավելի խորը գիտելիքներ միջուկային էներգիայի, դրա օգուտների, անվտանգության միջոցների մասին: ՃԱԷԳ-ի կրթական նախաձեռնությունների հիմնական նպատակներից մեկը միջուկային էներգիայի և ճառագայթման վերաբերյալ հայտարարության և հասկացողության խթանումն է: Հաշվի առնելով միջուկային ոլորտում հմուտ մասնագետների կարիքը՝ ՃԱԷԳ-ի կրթական ծրագրերը նաև կենտրոնանում են ապագա մասնագետների զարգացման վրա: Հատուկ պատրաստման և կրթական ծրագրերով ՃԱԷԳ-ն ապահովում է որակավորված անձանց շարունակական ներգրավում, ովքեր կարող են նպաստել ոլորտի զարգացմանը:

Հանդիպումների ժամանակ հանդես եկավ Կենիչի Կակուն (Գիտության և տեխնիկայի բաժնի ավագ մենեջեր) իր զեկույցով՝ «Բարձր մակարդակի ռադիոակտիվ թափոնների կառավարում և հասարակության իրազեկման միջոցառումները Ճապոնիայում»: Բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ թափոնների (ԲԱՌԹ) կառավարումը համաշխարհային կարևորություն ունեցող խնդիր է, որը պահանջում է շարունակական հետազոտություն և ռազմավարական պլանավորում: Ճապոնիան, որպես ատոմային էներգիայի լայն օգտագործման երկիր, բախվում է ԲԱՌԹ-ների արդյունավետ կառավարման անհրաժեշտության և հասարակության իրազեկման ու ներգրավման խնդիրների հետ: Ճապոնիան ակտիվորեն հետազոտում է նոր տեխնոլոգիաներ ԲԱՌԹ-ի կառավարման համար, ներառյալ վառելիքի վերամշակման մեթոդները, որոնք թույլ են տալիս նվազեցնել թափոնների ծավալը և ռադիոակտիվության մակարդակը: Բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ թափոնների կառավարումը պահանջում է բազմակողմանի մոտեցում, որը ներառում է տեխնիկական, սոցիալական և քաղաքական բաղադրիչներ: Հասարակության ներգրավման և իրազեկման միջոցառումները կարևոր են երկարաժամկետ հաջողության համար: Ճապոնիան, ունենալով մեծ փորձ և տեխնոլոգիական հնարավորություններ, կարող է լինել օրինակելի երկիր այս ոլորտում, եթե համատեղի իր ջանքերը միջազգային փորձի հետ: Այցելեցինք նաև Օհիի ատոմակայան, կայանի բոլոր էներգոբլոկները օգտագործում են ջրա-ջրային ռեակտորներ, ինչը աշխարհում հաճախակի ընտրված ռեակտորային տեղակայանք է, որը ապահովում է ատոմային էներգիայի արտադրության արդյունավետությունն ու անվտանգությունը: Այս ռեակտորները օգտագործում են ուրան դիօքսիդային վառելիք և սառեցվում են սովորական ջրով բարձր ճնշման ներքո: Ինչպես գիտենք, Ֆուկուշիմա Դաիչի ԱԷԿ-ի վթարից հետո Ճապոնիայի կառավարությունը դադարեցրեց համարյա բոլոր ատոմակայանների աշխատանքը, այնուհետև կայանները կատարելով լրացուցիչ անվտանգության միջոցառումներ՝ ստանում են վերագործարկման թույլտվություններ:

Օհիի ԱԷԿ-ի վերագործարկումը ցույց տվեց, որ հնարավոր է անցնել միջուկային էներգիայի անվտանգ և վերահսկվող օգտագործման՝ հաշվի առնելով նոր ստանդարտները: Սա կարևոր քայլ է ճապոնիայի համար, որը բախվել է էներգիայի արտադրության մեծ մարտահրավերներին՝ կապված վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման և միջուկային էներգիայի անվտանգության հետ: Ապագայում Օհիի ԱԷԿ-ի փորձը կարող է լինել օրինակելի միջոց՝ ինչպես կիրառել նորագույն տեխնոլոգիաներ և անվտանգության չափանիշներ միջուկային էներգիայի ոլորտում:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցելությունը ճապոնական HITACHI-GE Nuclear Energy Ltd ընկերության հարթակ շատ կարևոր էր: Կազմակերպիչների կողմից ցուցադրվեց առաջատար ՓՄՌ արտադրական հարթակները: Խիստ որակի հսկողության գործընթացները ապահովում են ՓՄՌ բաղադրիչների հուսալիությունն ու անվտանգությունը:

Ճանաչողական այցը բավականին արդյունավետ և օգտակար էր Հայաստանի համար ապագա էներգետիկ տեխնոլոգիաների ընտրության տեսանկյունից:

Հանդիպման ավարտին կազմակերպիչների կողմից ընդգծվեց սույն ծրագրի շարունակական լինելու կարևորությունը: Այցի ավարտին մասնակիցներին տրամադրվեցին միջոցառումներին վերաբերող նյութեր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Միջոցառումը բավականին արդյունավետ և ինֆորմատիվ էր առաջին հերթին ակտիվ քննարկումների շնորհիվ:

Հարկ եմ համարում ընդգծել, որ համատեղ աշխատանքը, փոխադարձ աջակցությունը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը բավականին օգտակար կլինեն մեր ծրագրերի, հեռանկարների իրականացման և կատարելագործման համար:

«ԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն



Մ. Վարդանյան